Այս բոլոր շրջանների ժամանակ նկատուելի է, որ Ասիական կամ Ցարեթական դարերից սկսեալ Արիականների տիրող շրջանում աշխատաւորի ունակ ձեռքերը եւ ստեղծագործող միտքը անվերջ գործել են եւ զարգարել Ճորոխի Աւազանը. զարգացրել են ո՛չ միայն անասնապահութիւնը, երկրագործութիւնը, այգեպանութիւնն ու շինարարութիւնը, այլ եւ զարգացրել են երկիրը ճոխ կերտուածքներով. միայն վերջին – իսլամական շրջանը կործանարար եւ աւերիչ դեր է կատարել եւ քաղաքակրթութեան հետքերի փոխարէն նրա աւերիչ ձեռքերի հետքերն են մնացել: Անշուշտ առանց պեղման, գիտական ուսումնասիրութեան, դժուար է որոշ եզրակացութիւններ անել. բայց հեթանոսական եւ քրիստոնէական դարերի հազարաւոր ամրոցների, բերդերի, դղեակների ու արձանների, տաճարների եւ ապարանքների հետքերը վկայում են, որ Ճորոխի Աւազանում քաղաքակրթութիւնն ու շինարարութիւնը ձեռք–ձեռքի տուած առաջ են գնացել միշտ. երբ ժողովուրդն անկախ է եղել եւ ինքնուրոյն գործել. իսկ երբ Խալիֆական–Իսլամական տիրող իշխանութեան թաթի տակ է ընկել, նա անընդհատ զրկուել է շինարար ընդունակութիւնից եւ կործանման է դատապարտուել: